ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի մայիսի 15-ին

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 3.

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ, ԲՆԱԿԱՆՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 13. Համալիր և տարեկան ծրագրերի բովանդակությունը և դրանց մշակման սկզբունքները

1. Համալիր և Տարեկան ծրագրերը ներառում են՝

ա) հիմնական նպատակներն ու խնդիրները.

բ) տեղեկանք Սևանա լճի ու նրա ջրհավաք ավազանի ջրային պաշարների, կենդանական ու բուսական աշխարհի, էկոլոգիական ենթահամակարգերի մասին.

գ) նախատեսված աշխատանքների ծավալները, դրանց իրականացման ժամանակացույցը.

դ) նախատեսված աշխատանքների ֆինանսավորման համամասնությունները.

ե) ծրագրերի կատարման սկզբունքները և նախատեսված աշխատանքների իրականացման առաջնահերթությունները.

զ) Սևանա լճում և նրա էկոտոնային տարածքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գործունեություն իրականացնելու սկզբունքները, եղանակները և տեսակները.

է) այլ պայմաններ, որոնք անհրաժեշտ են ծրագրերի համակողմանի ներկայացման համար:

2. Համալիր ծրագիրը ներառում է նաև՝

ա) նախատեսված աշխատանքները՝ ըստ լիազորված մարմինների.

բ) նախատեսված աշխատանքների և դրանց ֆինանսավորման գործընթացի վերահսկողության կարգը:

3. Տարեկան ծրագիրը ներառում է նաև՝

ա) նախատեսված աշխատանքների ընթացիկ և սպասվելիք կատարողականի վերլուծությունը.

բ) Սևանա լճի էկոլոգիական կայունությունը չխախտող և լճի ջրային դրական հաշվեկշիռն ապահովող ջրթողումների և անվերադարձ ջրառումների պլանները և ընթացիկ գրաֆիկները.

գ) Սևանա լճից ջրթողումների և ջրառումների տարեկան առավելագույն չափաքանակը՝ ամսական կտրվածքով.

~~դ) Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի կենսառեսուրսների (այդ թվում՝ ձկնային և խեցգետնային) արդյունահանման և արդյունագործական որսի տարեկան առավելագույն չափաքանակները և արդյունագործական որակի բնութագրերը՝ ամսական կտրվածքով:~~

4. Տարեկան ծրագրի հետ Կառավարությունը ներկայացնում է նաև այդ ծրագրի կատարումն ապահովող օրինագծերը:

4[1]. Տարեկան ծրագիրը Կառավարությունն Ազգային ժողով է ներկայացնում պետական բյուջեի նախագծի կազմում:

5. Համալիր և Տարեկան ծրագրերը մշակվում են դրանց համապատասխանության ապահովման, ծրագրային աշխատանքների և ֆինանսական ապահովման հաշվեկշռվածության, համադրելիության և հաշվետվության սկզբունքների պահպանմամբ:

ՀՈԴՎԱԾ 15. Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը

Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման բնագավառներում Կառավարությունը՝

ա) կազմակերպում, համակարգում, մշակում և ապահովում է Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման բնագավառներում պետական քաղաքականության իրականացումը.

բ) հաստատում է բնական պաշարների օգտագործման, տնտեսավարող սուբյեկտների կողմից արտանետումների, արտահոսքերի և թափոնների թույլատրելի նորմերը.

գ) սահմանում է ձկան և խեցգետնի պաշարների վերականգնման, պահպանման, վերարտադրման, ինչպես նաև դրանց պաշարների որոշման, ձկան և խեցգետնի արդյունագործական որսի քանակների, ձևերի և կազմակերպման կարգը.

գ1) յուրաքանչյուր տարի սահմանում է Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի չափաքանակները և ժամկետները, արդյունագործական որսի կազմակերպման պայմաններն ու պահանջները.

դ) իրականացնում է սույն օրենքով, այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

ՀՈԴՎԱԾ 16. Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման ոլորտներում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի իրավասությունը

(վերնագիրը փոփ. 04.03.20 ՀՕ-114-Ն)

Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման ոլորտներում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին)՝

ա) մասնակցում է Սևանա լճի էկոհամակարգի պահպանության պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը.

~~բ) իրականացնում է վերահսկողություն բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ.~~

գ) մշակում է առաջարկություններ՝ ծրագրային խնդիրների լուծման համար.

դ) պատվիրում է Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման ուղղությամբ գիտատեխնիկական հետազոտություններ ու ճարտարագիտական աշխատանքներ.

ե) վերահսկում է Սևանա լճի ձկնատեսակների և խեցգետնի, ինչպես նաև ցամաքային և ջրային բույսերի և կենդանիների արհեստական վերարտադրության գործընթացը.

զ) իրավասու է տնտեսավարող և այլ սուբյեկտներից պահանջել կենտրոնական, անմիջական և ոչ անմիջական ազդեցության գոտիներում շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն, ինչը լիազորված մարմին է տրամադրվում դիմելուց հետո՝ տասնօրյա ժամկետում.

է) յուրաքանչյուր եռամսյակի վերջում հանրային հեռուստառադիոընկերությամբ հաղորդում և մամուլում հրապարակում է Սևանա լճի էկոլոգիական համակարգի վիճակի մասին տեղեկատվություն.

ը) կազմակերպում է իր իրավասությունների շրջանակներում գտնվող հարցերի հասարակական քննարկումներ.

թ) կազմակերպում և համակարգում է մոնիթորինգային աշխատանքներ.

ժ) իրականացնում է սույն օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 28.1 Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման ոլորտներում օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունը

Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման ոլորտներում օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունն իրականացնում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում և գործիքակազմով: